ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 24.02.2025թ.կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման ուղղությամբ տարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/Խորեն Սարուխանյան–
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների
կառավարման վարչության պետի
ժամանակավոր պաշտոնակատար/

Օրակարգային հարցի կապակցությամբ ամփոփ տեղեկատվությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Սարուխանյանն ընդհանուր կարգով նշեց, որ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին դեռևս չհանձնված ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների անշարժ գույքի հանձնման ուղղությամբ շարունակվում է ամենօրյա աշխատանքների կատարման /փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ դպրոցներ, քննարկումներ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի համապատասխան աշխատակիցների հետ/ գործընթացը և արդյունքների մասին աղյուսակի տեսքով ներկայացրեց ներքոհիշյալ հետևյալ տեղեկատվությունը.

Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները**
«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Միջոցներ են ձեռնարկվում դպրոցի կողմից անշարժ գույքի տնօրինումն ապահովելու համար
«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	07.03.2025թ. փաստաթղթերը ներկայացվել են կադաստրի կոմիտե դպրոցի վկայականի վերագրանցման համար

«Հացիկի Ավետիս Բաղդասայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ, 1-ին փ., 26շ.	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Միջոցներ են ձեռնարկվում խնդրի լուծման վերաբերյալ:
«Հայկավանի միջնաարգ դպրոց» ՊՈԱԿ	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Հայկավան, 29 փողոց ,22 շենք	«Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հողամասի մի մասը զավթված է բնակիչների կողմից	Դպրոցի անշարժ գույքը հանձնվել է Պետական գույքի կառավարման կոմիտեին
«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Աշխատանքներ են տարվում ինքնակամ շինության օրինականացման համար
«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	Կառուցվում է նոր դպրոց: Դպրոցի անշարժ գույքը Պետական գույքի կառավարման կոմիտեին կհանձնվի շինարարությունը ավարտելուց հետո
«Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գյուղ Արագած, 5փ., 12 շենք	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում	Պետական գույքի կառավարման կոմիտեից ուղարկվել են փաստաթղթերն ընդունում-հանձնումը կազմակերմելու համար

Արգինայի միջնակարգ դպրոց	Գ. Արգինա, Աբովյան 40	Բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը	Պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկվել է մարզպետի համապատասխան գրություն կառավարության որոշման նախագիծ շրջանառելու համար
Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց	գ. Ալաշկերտ 2-րդ փ, 10-րդ շենք	«Ալաշկերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հին կաթսայատունը տարիներ շարունակ օգտագործվում է այլ անձի կողմից	Դպրոցի անշարժ գույքը հանձնվել է Պետական գույքի կառավարման կոմիտեին
Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Գեղակերտ բնակավայր, Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	Միջոցներ են ձեռնարկվում ինքնակամ շինությունների քանդման և հետևանքների վերացման կապակցությամբ

ՀՀ Արմավիրի մարզպետը, մտքերի փոխանակման կարգով քննարկելով աղյուսակի տեսքով վերը բերված տեղեկատվությունը, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Սարուխանյանին **հանձնարարեց՝ շարունակել արդյունավետ աշխատանքներն աղյուսակում նշված և անշարժ գույքը ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին դեռևս չհանձնած հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:**

Մի շարք ընթացիկ, մասնավորապես՝ հակակարկտային կայանների տեխնիկական վիճակի, ոռոգման ջրի մատակարարման նախապատրաստական աշխատանքների ընթացքի, շինարարական և կենցաղային աղբի սահմանված վայրեր տեղափոխման, սուբվենցիոն ծրագրերի իրականացման, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզի տուրիզմի զարգացման ծրագրերի մշակմանն ու ներդրմանն ուղղված գործընթացի, սահիկաշարի ձևաչափով ներկայացվելիք կիսամյակային հաշվետվությունների միասնական մոդելի մշակման և համեմատական տվյալների ընդգրկման պահանջի, եկամուտների հայտարարագրման գործընթացին վերաբերող ուսուցողական նյութերի հրապարակման, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում զետեղված նյութերի պարբերաբար թարմացման, ՀՀ Արմավիրի մարզպետի, ինչպես նաև մարզպետի աշխատակազմի գործունեությանն ու մարզում

տեղի ունեցող նշանավոր իրադարձությունների լուսաբանման անհրաժեշտության հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը, Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Սարուխանյանը, Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը, ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մանվել Մելիքյանը և Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը, Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարկայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանը:

Ներկայացված տեղեկատվությունների կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը համապատասխան ցուցումներ տվեց վերը նշված աշխատակիցներին:

ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանին հանձնարարեց՝ հաջորդ գործակարգավարական խորհրդակցության օրակարգում ընդգրկել <<Համայնքային ենթակայության հակակարկտային կայանների տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին>> հարցը:

Օրակարգային ու վերը նշված մի շարք ընթացիկ հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-03-11 15:52:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության պետ՝ Դավիթ Դավթյան